Հովհաննես Թումանյան

Գրազը

1

Այնտեղ սարերն իրար են հանդիպել, իրենց արանքում մի մեծ ձոր են ստեղծել, որ կոչվում է Մութը Ձոր:

Մութը Ձորը բաժանում է հայերին ու թուրքերին իրարից: Նրա մի կողմը թուրք սարվորն է իջնում, իր բինեն զարկում, մյուս կողմը՝ հայը:

Բայց նրանց իգիթները գիշերվա մթնով էլ անցնում այս խոր անդունդը, իրարից ոչխար են գողանում, ձի, կով կամ գոմեշ են քշում: Նրանց հովիվները հանդերում են հասնում ու փետակոիվ են անում:

Մեկ էլ տեսար մի սարի ուսից տարածվեց մի զիլ, առաձգական ձայն՝ «Հավար հե՛յ . . .»: Այդ գուժավոր ձայնը ձգվելով՝ տարածվում է լեռներում, ու հանկարծ երկու կողմն էլ բինեքում իրարով են անցնում:

2

Թուրք Ղափըչօղլին իր բինեն զարկել, ձվար էր արել Մութը Ձորի մի կողմը: Այնտեղից խրոխտ ու սպառնալի նայում էր դիմացը վեր եկած հայերին: Նրա մարդիկը այդ սարերի ամենահոչակավոր գողերն էին: Դատաստանից փախածները նրա մոտ էին ծածկվում, սարերով անցնող ավազակային խմբերը նրա հարկի տակ էին ապաստան գտնում:

3

Մի իրիկնադեմ վրանում թինկը տված նա զրույց էր անում իր սովորական հյուրերի հետ: Նրանք հայտնի ավազակներ էին, որ անցնում էին լեռներով:

Էս դիմացի հայերին լավ է տղերքը տակնուվրա չեն անում, իր զարմանքը հայտնեց հյուրերից մի քուրդ:

Էդքան էլ խեղճ մի գիտենալ դրանց, պատասխանեց տանտերը:

Դրա՞նց . . .

Հա՛, դրանց: Դրանց մեջ Չատի անունով մի չոբան կա, իգիթ եմ ասում, որ մենակ էն մի տղի դեմը դուրս գա:

Փա՛, հա՜, բացականչեց վրդովված ավազակը ու շրխկալով վրա նստեց:

Ի՞նչ կտաս գիշերս էնպես անեմ, որ առավոտն էլ ծուխ չբարձրանա դիմացը:

Կապուտ ձին փեշքեշ:

Ձեռքդ տուր:

Նրանք ձեռք ձեռքի խփեցին ու գրազ եկան:

4

Սարսափելի մութն են Մութը Ձորի գիշերները:

Մի մթնագիշեր էր . անձրևն էլ անընդհատ տեղում էր միալար: Քնած էր հայերի բինեն: Երբեմն-երբեմն հովիվները այս կամ այն կողմից խուլ «հե՜յ-հե՜յ . . .» կանչելով, իմացնում էին, որ հսկում են դեռ:

Գիշերվա մի ժամանակը մի թմփթմփոց անցավ վրանների մոտից: Շները վեր կացան, վրա տվին, ոչխարը խրտնեց, ձիաները փախան, տավարը ցրվեց: Հովիվները հավար կանչեցին, հրացանները բացվեցին, և այս բոլոր սարսափներն ու ձայները խառնվելով մութին, հեղեղին ու ամպի որոտմունքին, հորինեցին մի դժոխային գիշեր:

Շունը տարա՞ն, բինեն պահեցեք հե՛յ . . . — գոռաց աժդահա հովիվ Չատին:

Շունը տարա՞ն . . . ձայն տվին ամեն կողմից, ու սև սարսափը կալավ բինին: Լեռներում ամեն մարդ լավ է հասկանում, թե ինչ կնշանակի՝ «Շունը տարան»:

Գողերը միշտ մի կամ երկու հոգով վազում են ընկնում են բինեն, ոչխար, ձի, տավար խրտնացնում, խառնում են իրար: Շներն ընկնում են նրանց ետևից: Նրանք էլ շներին հաչեցնելով տանում, հեռացնում են բինից: Այնուհետև խառնված, անշուն բինին ետևից վրա են տալիս նրանց ընկերները և շփոթի ու խավարի մեջ քշում են նրանց անասունները:

Շուտով հետևեց երկրորդ հարձակումը, հարահրոցն ընկավ, հրացանները բացվեցին, ամեն բան մթնումը խառնվեց իրար ու իրար խառնված ընկավ դեպի ներքև:

Ակնակիր մթնում ոչինչ չէր երևում: Փայլակի լուսով վայրկենաբար բացվում էր ահռելի տեսարանը, բայց մարդու աչքերը որոշ բան չէին կարող նկատել այն թոհուբոհի մեջ: Աչքերը չէին կարող նկատել, բայց հրացանների ձայները ցույց էին տալիս, թե որ կողմից են գնում, հովիվների աղաղակը, որ կանչում էին՝ «Տարա՞ն, տարա՞ն . . . Ալաբաշ, հե՛յ . . .»:

Այդ ձայներն էլ հետզհետե հեռացան, նվազեցին, ու էլ ոչինչ չէր լսվում:

Անձրևը միալար շրըփում էր, և ամպը խուլ ճայթում ու որոտում հեռու լեռներում:

5

Լուսադեմին տղերքը վերադարձան: Դեռ հեռվից լսվում էր նրանց ուրախ-ուրախ խոսոցն ու ծիծաղները թանձր մշուշի մեջ: Ապրանքն ական ու անվնաս ետ բերին հանձնեցին սարվորին, իրենք հավաքվեցին հովիվ Չատնի վրանը, որ հաց ուտեն:

Նրանք իրենց հետ բերել էին մի քրդի քոլոգ, վահանն ու թուրը:

Իսկույն տարածվեց, թե տղերքը մի քուրդ են սպանել, ու հետաքրքրած սարվորները եկան խռնվեցին վրանի ներսն ու դռների արանքում: Չատնի մայրը

սոված հովիվների համար կրակի վրա կերակուր էր շինում ու հետն էլ իրեն-իրեն դունդունում.

Ա տղա, նա էլ մեր կունենա՛ . . .
Ա տղա, հիմի նրա մերը ճամփա կպահի՛ . . .
Ա տղա, կասի, տղես ետ չեկավ . . .
Ա տղա, ճամփա կպահի՝ ետ չի գնա՛լ . . .

Գլուխներն օրորելով նրան ձայնակցում էին մի քանի ուրիշ կանայք: Այնինչ հովիվները սարվորին պատմում էին, թե բանն ինչպես եղավ:

Չորս կողմից հավաքեցինք, տարանք արինք մի ձոր: Էստեղ սրանց տեղը որ նեղացրինք, սրանք ապրանքը թող արին, ու ամենքը մի կռան վրա փախան: Մընին քշեցի, տարա քարափին դեմ արի: Որ քարափին դեմ էլավ, մին էլ տեսա ետ դառավ, թուրը հանեց, վրա քշեց, թե՝ գլուխդ ազատի, միջիցդ կես եմ անում. դագանակը պտտեցի, ուսախառը վեր բերի, ա՛ռ հա կտաս . . .

Ա՛յ տո՛ւր, բացականչեցին սարվորները:

Շրըխկալով փռվեց, վերջացրեց Չատին իր պատմությունը:

Հա՛, հա՛, հա՛, հա՛, քահ-քահ խնդացին սարվորները:

6

Այս դեպքից մի քանի շաբաթ անց էր կացել: Մի օր շները հաչեցին . դուրս եկան, տեսան մի պառավ քուրդ ձայն էր տալի բինի ներքևից:

Ի՞նչ ես ուզում, ա՛ քիրվա:

Չոբան Չատնի վրանն եմ ուզում, ասավ քուրդը:

Բերին չոբան Չատնի վրանը: Չատին հաց դրեց հյուրի առաջ: Դեսից-դենից խոսեցին, մինչև հացը կերավ, պրծավ: Երբ որ հացը կերավ, պրծավ, Չատին հարցրեց .

Խեր ըլի, ընչի՞ համար էր եկել քիրվան:

Էստեղ մի քանի շաբաթ առաջ մի քուրդ են սպանե՞լ, խոսեց հյուրը:

Սպանել են, պատասխանեց հովիվը: Ասում են՝ դու ես սպանել:

Դրուստ է:

Ես նրա հայրն եմ, ասավ ծերունին: Եկել եմ, որ նրա արինը քեզ հալալ անեմ: Դու նրան ճամփին չես սպանել, իր տանը չես սպանել . . . Քանի անգամ ասի՝ ա՛յ որդի, ձեռը վեր կալ էդ հարամ ճամփից, հեռու կաց էդ ընկերներից . ուրիշները քեզ համար չեն աշխատել . . . ինձ չլսեց: Երևի էդպես մահը մոտեցել էր, ասավ քուրդը ու գլուխը քաշ արավ, լռեց:

Հավատիդ հաստատ կենաս, որ արդարն ես խոսում, չորս կողմից ձայն տվին սարվորներն, ու իրենք էլ լռեցին:

Արինը քեզ հալալ, բացականչեց ծերունին, միայն մայրը . . . գիտես էլի, մայր է . . . չի հանգստանում . . . Շորերն ինձ տվեք, տանեմ, շորերի վրա լաց ըլի, իր սիրտը հովացնի, իր կարոտն առնի:

Չատին բերեց, ծերունուն հանձնեց արյունոտ քոլոզը, վահանն ու թուրը, մի ոչխար էլ առաջն արավ ու շներն անցկացրեց, տարավ ճամփու գցեց:

Դե մնաս բարով, զավակս, հրաժեշտ տվավ ծերունի քուրդը:

Գնաս բարով, քիրվա՛: